

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերուն (42/1 եւ 42/2) շնորհանդէսը Պէյրուֆի...

Հինգշաբթի, 19 Յունուար 2022ի երեկոյեան, Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան հայագիտական հանդէսի (<<<) 2022 տարուան (42րդ հատոր) զոյգ գիրքերուն (42/1 եւ 42/2) շնորհանդէսը, ներկայութեամբ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի, Հանդէսի հնագոյն աշխատակից, Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ պատմաբան, պատուակալ դոկտ. Զաւէն Մսրըլեանի, Մխիթարեան միաբանութեան փունջ մը սաներու, հիւրերու, բարեկամներու եւ Հանդէսի խմբագրակազմի անդամներուն:

Բացման խօսքին մէջ, Հանդէսի խմբագիր դոկտ. Արմէն Իրնէշլեան հրաւիրեց ներկաները յոտնկայս լռութեամբ յարգելու Հանդէսի խմբագրակազմի ապա եւ խորհրդատու մարմնի անդամ հանգուցեալ Ժիրայր Դանիլեանի յիշատակը, որմէ ետք ան նշեց թէ 42րդ հատորէն սկսեալ Հանդէսը լոյս պիտի տեսնէ մէկ հատոր-երկու գիրք դրութեամբ: Դոկտ. Իրնէշլեան արձանագրեց ընթացիկ հատորով սկսող նորութիւնները՝ «<<Հի նոր մշակուած առաքելութիւնն ու տեսլականը», «մասնագիտական հարցազրոյց»ի բաժինը, «ազգագրական, բանահիւսական» հում նիւթի ներկայացումը, հատորները եզրափակող «Յիշատակարան»ը: Ան միաժամանակ նշեց, թէ Հանդէսը «բեմ կը հանդիսանայ նաեւ երիտասարդ գիտնականներու, այն հասարակ համոզումով, կամ գէթ ակնկալիքով, որ անոնք այս հանգամանաւոր հանդէսին մէջ հրապարակուելով, կը դառնան աւելի՛ խստապահանջ, աւելի՛ բժախնդիր եւ յօդուած առ յօդուած կը բարելաւեն իրենց աշխատանքը»:

Վաստակաշատ բանասէր դոկտ. Յակոբ Չոլաքեանի խօսքը ընթերցեց Հանդէսի խմբագիր Սիլվա Փափազեան: Դոկտ. Չոլաքեան <<Հն նկատեց «Ներկայիս՝ Սփիւռքի մէջ աւանդական ուղղագրութեամբ լոյս տեսնող փաստօրէն միակը... բոլոր գրութիւնները, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, լոյս կը տեսնեն աւանդական ուղղագրութեամբ: Մեր ուղղագրութեան բազմաձեւութիւններու բովին մէջ խմբագրութիւնը միօրինականացման յարակ մօտեցում կը ցուցաբերէ: Ասիկա յուժ կարեւոր փաստ մըն է հայագիտութեան արեւմտահայ աւանդութիւնները պահպանելու տեսակէտէն»: Ապա ան ընդգծեց, թէ «Հայագիտութեան նուաճումները պէտք է հասնին օտար ընթերցողին, ասիկա անհրաժեշտութիւն մըն է... մեր ցանկութիւնն է, որ մեր ուսումնասիրողները նախ կիրարկեն արեւմտահայերէնը եւ հուսկ, հանրայնացնելու համար արժանի նիւթերը՝ շարադրեն անգլերէնով կամ այլ լեզուով մը: Հայագիտութիւնը մեր հոգեւոր եւ նիւթական մշա-

կոյթի արժեքները արժեւորելու ու հանրայնացնելու դերը ունեցած է եւ ունի ներկայիս,- ու թելադրեց,- պէտք է կարողանալ օտար եւ օտարագիր հայագէտներուն ալ ցանկալի բեմ դարձնել Հանդէսը... Կ'սկնկալուի նաեւ, որ Հանդէսը կարողանայ սերտ կապեր հաստատել ամբողջ Սփիւռքի տարածքին սփռուած հայագիտական հիմնարկներու եւ ամբիոններու հետ ու ապահովել անոնց մերձեցումն ու նոյնիսկ համատեղ ծրագիրներ մշակել»։ Դոկտ. Չոլաքեան անդրադարձաւ նաեւ ընդգրկուած նիւթերուն խմբաւորումներուն, մատնանշեց «մօտիկ անցեալի մեր խնդիրները լուսարձակի տակ» առնող նիւթեր, ու շեշտեց՝ «Մեզի համար յուժ կարեւոր են արեւմտահայութեան ու մասնաւոր սփիւռքահայութեան վերաբերող ուսումնասիրութիւնները, որոնք լուսարձակի տակ կ'առնեն որոշ տեղավայրեր, դէպքեր ու դէմքեր, կամ կու տան համայնքային-յարանուանական ու գաղութային պատմութեան պատկերը», «ցանկալի» նկատեց որ «սփիւռքահայ գրականագէտներ, արուեստաբաններ եւ երաժշտագէտներ տեղ գրաւեն Հանդէսին մէջ»։ Ան նկատեց որոշ հետաքրքրութեան մը ներկայութիւնը «Սփիւռքի մէջ հայ ժողովուրդի նիւթական մշակոյթի ցրուած արժեքները հաւաքողներուն եւ հանրայնացնող ուսումնասիրողներու նկատմամբ», կարեւորեց Հանդէսի հրատարակումներու բաժինը, Հանդէսին «իւրայատկութիւններէն» համարեց աշխատակիցներու կենսագրութեան ու «մահագրականներ» բաժինները։ Հուսկ, ան գնահատելով Հանդէսի լեզուագիտութեան բաժինը, «ցանկալի» գտաւ որ «Սփիւռքի համար լրջագոյն խնդիր ներկայացնող արեւմտահայերէնի ուսուցման հետ կապուած հարցերը՝ մեթոդաբանութիւն, դասագիրքեր, ուսուցիչներու որակաւորում, առկայ եւ առցանց, ամէնօրեայ եւ միօրեայ ուսուցման հարցերը... քննարկումի ենթարկուին» Հանդէսին մէջ։ Դոկտ. Չոլաքեան շնորհակալութիւն յայտնեց Հանդէսի հրատարակութեան զօրավիգ կանգնած մարմիններուն եւ խմբագրակազմին «բժախնդիր ու հետեւողական աշխատանքներուն»։

Շնորհանդէսի գեղարուեստական բաժինով, 42րդ հատորի առաջին գիրքին մէջ լոյս տեսած հանգուցեալ Վահան Ա. քնյ. Քենտիրճեանի ինքնագիր յօրինումներէն երգեց իր թողը՝ տիար Սեւակ Քենտիրճեան։

Անդրադառնալով դարերու ընթացքին բառերու, հասկացութիւններու եւ հաստատութիւններու հանդէպ մարդ արարածին ընկալման փոփոխութիւններուն, Հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տագէսեան հաւաստեց, որ ՀՀ-ի «պատկան մարմինները, խմբագրակազմն ու անոր շուրջ հաւաքուածներս ... կը դաւանինք հայագիտութիւն հասկացութեան նոր սահմանումին, զայն աւելի լայն կը տեսնենք քան դասական հայագիտութիւնը...: ...Մեր դաւանած հայագիտութեան նոր սահմանումը կը կիրարկենք ... Հանդէսին մէջ...քանի որ կը հաւատանք որ այդպէսով հայագիտութիւնը կ'այժմէականանայ, ... կը թարմանայ, կ'երիտասարդանայ, այդպէսով ան առաւել՝ օգտապաշտական, ստարտողական կը դառնայ։ Ասիկա գործընթաց մըն է, որուն իրագործումը հետեւողականօրէն կը հետա-

պնդենք»: Դոկտ. Տազեսեան եզրափակեց իր խօսքը, ընդգծելով, որ «Ժամանակն է, որ ազգային գերագոյն ճգնաժամի այս օրերուն, մենք մեր բաժինը կատարած ըլլալու ինքնասխաբէութեան **քամֆրթ զոներէն դուրս գանք եւ արտակարգ ուսումով մը վերաիմաստաւորենք մեր ազգային հասկացութիւնները եւ վերաիմաստաւորուած կիրարկենք զանոնք**»:

Փակման իր խօսքին մէջ, Հայկազեան համալսարանի նախագահ վեր. Հայտնութեան գոհունակութիւն յայտնեց Հանդէսին արձանագրած յաջողութիւններուն, անոր հետեւողական հրատարակման, մակարդակին պահպանման: Ան Հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերու հրատարակումը նկատեց «վստահաբար զարգացման քայլ», անելցնելով որ «գոհունակութիւն անպայման չի նշանակեր բաւարարութիւն: Սակայն, երբ կայ պատճառ գոհունակութեան՝ մենք կարելորութեամբ պէտք է զայն ընդգրկենք»: Ան անելցուց, որ հայկական «նահանջի օրինակները կրնան բազմաթիւ ըլլալ մեր չորսոյին: Բայց կարիքը ունինք յիշելու թէ կան նաեւ կարելոր յառաջ-խաղացքներ մեր հայկական կեանքին մէջ»:

Վեր. Հայտնութեան կարելորեց հայ դպրոցին մէջ տարուելիք աշխատանքը՝ «կարդա՛լ, մտածե՛լ եւ գրե՛լ քաջալերել, որպէսզի նորահաս սերունդները չթուլնան իրենց զարգացման եւ աճման ջանքին մէջ»: Ան անդրադարձաւ գիտական եւ տեղեկատուական աշխարհին մէջ տարուող մրցակցական պայքարին, հաւաստելով որ էական է «բոլոր լեզուներով առատ հայագիտական նիւթ հայթայթելը աշխարհին»:

Հուսկ, ան ողջունեց «Արցախի մէջ պայքարող մեր աշխատակիցները, Հայաստանի եւ Սփիւռքի հայագէտները որոնք կը գործեն առանձինն իրենց անկիւններուն մէջ կամ հաստատութիւններու մէջ, մեզմէ բաժնուած ու սիրելի Ժիրայր Դանէլեանի թարմ յիշատակը, անոր հայագիտական վաստակը Հայկազեան համալսարանէն ներս երկար տարիներ եւ շատ անդին, ներառեալ Հանդէսի պատմութեան մէջ»: Վեր. Հայտնութեան իր խօսքը փակեց գնահատանքի խօսք ուղղելով խմբագրակազմին եւ՝ «2023ի հատորով նորանոր հանդիպումներու յոյսով եւ նորոգեալ տեսիլքով» բաժնուիլ առաջարկեց շնորհանդէսի այս «սոնական» պահէն:

Եւ Հայաստանի Պատմութեան Թանգարանին մէջ

Ուրբաթ, 3 Մարտ 2023ին, Հայաստանի Պատմութեան Թանգարանի Պատուոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան հայագիտական հանդէսի 42րդ հատորի զոյգ գիրքերուն շնորհանդէսը ներկայութեամբ Թանգարանի տնօրէն դոկտ. Դաւիթ Պօղոսեանի, Հայկազեան Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտնութեանի, հայրենի հայագիտական զանազան կեդրոններու ներկայացուցիչներու, հայագիտութեան անելի քան 50 մշակներու, Հանդէսի հին ու նոր աշխատակիցներու, բարեկամներու եւ գրքասէրներու:

Թանգարանի փոխտնօրէն դոկտ. Նժդեհ Երանեան, բարիգալուստի խօսքին մէջ իր ուրախութիւնը յայտնեց որ առաջին անգամ է որ Թանգարանը նման ձեռնարկ մը կը կայացնէ: Ան իր գոհունակութիւնը յայտնեց ընդգծելով որ նորատեսակ այս գործակցութիւնը՝ Պատմութեան Թանգարանին եւ Հայկազեան համալսարանին միջեւ իր առաջին իսկ քայլերէն շատ արդիւնաւէտ եղաւ եւ թէ կողմերը շատ արագ գտան հասարակ յայտարարներ եւ նպատակներ: Դոկտ. Երանեան յոյս յայտնեց որ այս գործակցութիւնը առաւել կը ծաղկի ու կը ծառայէ հայագիտութեան:

Յայտնի արուեստաբան, արուեստագէտ, հայկական ձեռարուեստի ու ասեղնագործութեան վաստակաւոր Հրազդան Թորքմաճեան խօսեցաւ Հայկազեան համալսարանի իր փորձառութենէն: Ան ոգետրութեամբ արտայայտուեցաւ Լիբանանի ու Սփիւքի մէջ Հայկազեան համալսարանին դերին ու տեղին մասին եւ ընդգծեց որ հակառակ Լիբանանի խորապէս դժուար պայմաններուն, Համալսարանը իր առաւելագոյնը կ'ընէ ծառայելու միջավայրին, հաւաքականութեան եւ տարածելու իր սկադեմական, մշակութային ու մանկավարժական լիցքն ու բերքը Լիբանանի հայ եւ ոչ-հայ շրջանակներուն: Թորքմաճեան բացատրեց որ Համալսարանը իմաստութեամբ եւ ճարտարօրէն կը գործէ Լիբանանի ընձեռած անհնարինութեան եւ նուազագոյն հնարաւորութեան միջեւ եղած լուսանցքին վրայ: Ան հաւաստեց որ այս քաղաքականութիւնը յաջող է եւ կու տայ իր բարերար արդիւնքները, որմէ կ'օգտուի հայութիւնը: Այս առումով ան իբրեւ օրինակ բերաւ *Հայկազեան հայագիտական հանդէսը* եւ նշեց որ Հայաստանի Պատմութեան Թանգարանին մէջ տեղի ունեցող այս շնորհանդէսը ապացոյց է որ Համալսարանը իր յաջողութիւնները կը բաժնեկցի իր միջավայրին հետ:

Հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տազէսեան հակիրճ ներկայացուց զոյգ գիրքերուն բովանդակութիւնը, նորութիւնները, եւ արտայայտեց իր մտորումները՝ հայագիտութեան ոչ-աւանդական սահմանումի ծիրին մասին: Ան ըսաւ թէ հայագիտութիւնը պարտի ռազմավարական անցում կատարել այն հունէն ուրկէ կ'ընթանար մինչեւ 1991ի Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակումը: Դոկտ. Տազէսեան խթանող մտահոգութիւններ արտայայտեց հայագիտութեան ներկայ ուղղութիւններուն խնդրով, ընդգծելով որ այսօր հայագիտական կենսական բնագաւառներ կան որոնք պէտք ունին աւելի խորունկ ուսումնասիրութեանց եւ առաջարկեց աւելի շատ օգտագործել միջուսմունքային եւ բաղդատական մօտեցումներ, նշելով նաեւ որ հետազօտութիւնները աւելի հիմնուին մարդասիրական բնագաւառներու տեսութիւններու վրայ, այնտեղ գերակշռեն վերլուծական, դրդապատճառային, պատճառահետեւանքային մօտեցումները քան թէ նկարագրական-պատմողական կողմը: Ան շեշտեց ժամանանակից հայկական ընկերաբանութեան, հոգեբանութեան, քաղաքական գիտութիւններու, ժողովրդագրութեան, երկրագործութեան, տնտեսագիտու-

թեան, պետականութեան եւ նման բնագաւառներու նիւթերու ուսումնասիրման կարիքը:

Իր խօսքին մէջ, դոկտ. Պօղոսեան ուրախութիւն յայտնեց նման ձեռնարկ մը հիւրընկալելուն համար, եւ գոհունակութիւն՝ Հայկազեան համալսարանի հետ գործակցութեան յուշագիր ստորագրելու խնդրով: Ապա ան հրաւիրեց վեր. դոկտ. Հայտօսթեանը, որ մատնանշեց թէ *Հայկազեան հայագիտական հանդէս* շնորհանդէսը տեղի կ'ունենար նման պատկառելի թանգարանի եւ կեդրոնական վայրի մը մէջ: Վեր. դոկտ. Հայտօսթեան ընդգծեց որ *Հանդէս* ու նման հրատարակութիւնները ունին պարտականութիւնը ամէն հայկական բան ուսումնասիրելու, հանրայնացնելու, մատչելի դարձնելու եւ նպաստելու յաւելեալ գիտելիքի ձեռքբերման: Ան ըսաւ. *«Ճիշդ է որ հրատարակութիւններ եւ թանգարան անցեալի վրայ հիմնուած են բայց կ'ուղղուին ու կը մարնանշեն ժողովուրդի ապագան»:*

Շնորհանդէսը փակուեցաւ Հայաստանի Պատմութեան թանգարանի եւ Հայկազեան համալսարանի միջեւ կնքուած գործակցութեան յուշագիրով: